ԱՍՔԱՐԻ ԱՍՂԱՐԻ ԳԱՆՋԻ
ASKARI ASGHARI GANJI

ԼՈԿՈՒՍ ԿՈՆՏՐՈԼԸ ԵՎ ՎԱՐՔԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ԴՐԴԱՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Լոկուս կոնտրոլ հասկացությունը մարդկային պատմության ընթացքում տարբեր իմաստներով ու ձևերով է շրջանառության մեջ է դրվել: Հին հունական ողբերգությունները ամբողջովին կառուցված են մարդու անճարակության և աստվածների բացարձակ կամքի գերակայության պատկերացումներով: Փիլիսոփաները լոկուս կոնտրոլի իմաստը բնութագրել են որպես «դետերմենիզմ» այն հակադրելով «ազատ ընտրության և կամքի ազատության» (freewill) սկզբունքին: Սոցիոլոգները այդ իմաստն արտահայտել են «ինքնուրույնություն» (Autonomy) հասկացությամբ՝ հակադրելով այն «օտարման» (Aliienation) հասկացությանը, իսկ հոգեբաններն այն բնորոշել են իբրև «բիհեյվորիզմ»՝ ի հակադրություն «սուբյեկտիվիզմի»: Սակայն լոկուս կոնտրոլ հասկացությունը, որպես այդպիսին, առաջին անգամ պաշտոնապես հոգեբանության մեջ կիրառվել է 1954-ին, **Ջուլիան Ռոթերի** կողմից: Ռոթերը **«Անհատականության սոցիալական յուրացման»** իր տեսության մեջ առաջադրեց լոկուս կոնտրոլ հասկացությունը: **Շուլտսի** և **Շուլի** կարծիքով, Ռոթերը փորձում էր բացատրել և հիմնավորել վարքն ու անհատականությունը օրգանիզմի ներսում և դրսում, որոշարկել արտաքին խթանիչները և ներքին իմացական (ճանաչողական) գործընթացները: Ռոթերն իր հետազոտական լայնածավալ աշխատանքներում նկատեց, որ մարդկանց մի խումբը դրդապատճառները փնտրում է սեփական անձի մեջ, մինչդեռ մյուս խմբին պատկանող մարդկանց համոզմամբ, իրենց դրդապատճառները վերահսկվում են այլ մարդկանց և արտաքին ազդակների կողմից: Ռոթերն սկզբում այդ երևույթն անվանեց «խթանման վերահսկում», այնուհետև վերանվանեց «վերահսկման սկզբնակետ կամ լոկուս»:

Ռոթերից հետո **Լեվենսոնը** (1973 թ.) առաջարկեց իր վերամշակած մոդելը: Եթե Ռոթերը անձի վերահսկման սկզբնակետը կամ լոկուսի վայրը որոշարկում էր միայն արտաքին-ներքին իմաստով, ապա Լեվենսոնը երեք առանձին կողմերից դիտարկեց վերահսկման սկզբնակետը (լոկուս կոնտրոլը) 1.Դրսս ներքին կամ արտաքին լինելը, 2.Հնարավորությունները 3. Այլ հզոր գործոնները: Լեվենսոնի մոդելի համաձայն, լոկուս կոնտրոլի այս երեք կողմերը կարելի է դիտարկել և առանձին-առանձին, և միասնաբար: Օրինակ, որոշ մարդկանց կարծիքով, իրենց վարքի վրա ազդում են

վերագրման մասին երեք գլխավոր տեսություններին, որոնք լոկուս կոնտրոլի հիմնավորման գլխավոր կողմներն են:

Վերագրում (Attribution). Սեփական և այլ մարդկանց զգացմունքների մասին ճիշտ ինֆորմացիան օգտակար ու արդյունավետ կարող է լինել, սակայն սոցիալական յուրացման տեսակետից, տեղեկատվությունը տվորաբար առաջին քայլն է համարվում, և մենք հաճախ ցանկանում ենք իմանալ ավելին, հասկանալ ուրիշների կայուն հատկանիշները և ճանաչել ուրիշների վարքի հիմքում ընկած պատճառները: Սոցիալ-հոգեբանների բացատրությամբ, մեր հետաքրքրությունը այդ հարցերի նկատմամբ բխում է սոցիալական կյանքի պատճառահետևանքային կապի բացահայտման ցանկությունից:

Այլ խոսքով, մենք ոչ միայն ցանկանում ենք իմանալ ուրիշ մարդկանց վարքը, այլև այդ վարքի դրսևորման հիմքային պատճառները ենթադրելով, որ այդ իմացությունը կարող է մեզ օգնել կանխատեսելու մարդկանց հետագա վարքը: Գործընթացը, որի միջոցով մենք որոնում ենք այդ ինֆորմացիան, կոչվում է «վերագրում»: Ավելի գիտական սահմանմամբ, «վերագրում» են կոչվում ուրիշների, երբեմն նաև սեփական վարքի դրդապատճառները ըմբռնելու ջանքերը:Կարճ ասած, «վերագրում» նշանակում է ուրիշների և սեփական վարքի ըմբռնում, սեփական պատկերացումների և ընկալումների վերագրումը տարբեր դեպքերի ու վարքերի դրդապատճառներին:

Վերագրման տեսություն (Attribution theory). Վերագրման տեսությունը ճանաչողական (իմացական) մոտեցում է, որն ուսումնասիրում է վարքի պատճառականության ընթացքը, հետևաբար այս տեսության հասկացությունային ապարատը մեծ մասամբ վերաբերում է անձի ճանաչմանն ու սոցիալական վարքին և լայն կիրառություն ունի, հատկապես, սոցիալական հոգեբանության ոլորտում:

Թաղը (1999) խոսելով վերագրման տեսության մասին, որն իր հիմքում սոցիալական հոգեբանության ոլորտի տեսություն է, մարդկանց անվանում է «միամիտ զիտնականներ»: Մարդիկ իրադարձությունները կանխատեսելու և կառավարելու համար պետք է բացահայտեն սեփական և այլոց վարքի պատճառները, որն էլ ազդում է նրանց գործողությունների վրա: **Հյումի** կարծիքով, (պատճառահետևանքային կապի որոնումը զգայական ընկալման բնածին առանձնահատկությունը չէ, այլ ձևավորվում է իրադարձությունների 2ղթայի արդյունքում, հետևաբար պատճառահետևանքային համակարգի ստեղծումը առաջանում է միջավայրից:

Վերագրման տեսության կողմնակիցների հիմնադրույթն այն է, որ մարդը հակված է ավելի շատ իմանալ միջավայրի պատճառական կառուց-

վածքի մասին: Նա ձգտում է հասկանալ այս կամ այն իրադարձությունը պատճառը: Մարդը սովորաբար չի բավարարվում միջավայրի երևույթների սոսկ բնութագրմամբ կամ վերարտադրությամբ, այլ ցանկանում է մեկնաբանել ու բացատրություն գտնել դրանց համար:

Թեև վերագրման տեսության արմատները կարելի է տեսնել իմացական (ճանաչողական) տեսաբաններին, ինչպես օրինակ, **Լովենի** և **Ֆեսթենգերի** աշխատություններում, սակայն այս տեսությունը հիմնականում կապում են **Հայդերի** անվան հետ: 1958 թվականին Հայդերն իր տեսությունն անվանեց **«Անհայտ գործողության վերլուծություն»** (Native Analysis of Action): «Անհայտ» ասելով, նա նկատի ուներ այն, որ սովորական մարդիկ, ընդհանուր առմամբ, անտեղյակ են վարքի օբյեկտիվ խթանիչներից և ազդակներից:

Այս տեսությունը բացատրում է, որ մարդը սովորաբար ինչպես է վերաբերվում կյանքի կարևոր իրադարձությունների դրդապատճառներին: Այդ պատճառները կարող են վերագրվել ներքին կամ արտաքին գործոններին և ըստ այդմ կոչվել անահատական ազդիչ ուժ և միջավայրի ազդիչ ուժ:

Եթե մենք սխալվենք ներքին ու արտաքին գործոնների ճանաչման ու գնահատման հարցում, կամ եթե գործոններից միայն մեկի վրա կենտրոնանաք, մոլորության մեջ կընկնենք և սխալ վերագրումներ կկատարենք: Եթե արտաքին ու ներքին գործոնները լիարժեքորեն չտարանջատվեն, չճանաչվեն ու չգնահատվեն, մեծ հավանականությամբ անձի մոտ կձևավորվեն սխալ սպասելիքներ, որոնք նրա հետագա վարքի հիմքը կդառնան: Այսպիսով, մեր դատողությունը որոշակի իրավիճակի վերաբերյալ և այդ իրավիճակը ապագայում փոփոխելու հնարավորության մասին, պայմանավորված է այն բանով, թե մենք իրավիճակը վերագրում ենք որ գործոններին ներքի՞ն, թե՞ արտաքին: Եթե անձը իրադրության փոփոխությունը վերագրում է ինքն իրեն կամ ներքին գործոններին, հետևաբար իր վերափոխման ուղղությամբ համապատասխան ջանք ու եռանդ է գործադրում, սակայն եթե փոփոխությունը վերագրում է արտաքին գործոններին, ոչ մի քայլ չի նախաձեռնում, քանի որ գործոնները իր կամքից ու ենթակայությունից դուրս է տեսնում և համապատասխան ջանք չի ներդնում:

Քելիի կարծիքով (1976), անձը վերագրման պրոցեսում իրադարձությունները համարում է անփոփոխ միջավայրի կոնկրետ հատվածի հետևանք: Ըստ Քելիի, վերագրման տեսության տարամաբանությունը հիմնվում է այն դրույթի վրա, որ մարդը ցանկանում է գլուխ հանել իր միջավայրի էությունից, հատկապես, որոշակի դեպքերի և իրադարձությունների դրդապատճառներից: Եթե անձին հաջողվի ըմբռնել անցյալում

տեղի ունեցած կոնկրետ իրադարձությունների դիտարկումը, այդ ժամանակ կարող է միջամտել դեպքերի ընթացքին և իր կատարած եզրակացությունների հիման վրա կառավարել հետագա դեպքերը: Այսպես դեպքերը կառավարելու և վերահսկելու հույսն ու ակնկալիքը մարդկանց մղում է որոշակի պատմաններ փնտրել տարբեր իրադարձությունների համար և համապատասխան միջոցներ ձեռնարկել:

Բարոնն ու գործընկերները (2006) նշում են, որ ուրիշների վարքի վերաբերյալ ծագող «ինչուներին» պատասխանելու նպատակով, հենվում ենք երեք տիպի տեղեկատվության վրա. 1- Կոնսենսուս կամ ընդհանրացում. Մարդկանց մեծ մասը ինչպես է պատասխանում միևնույն դրդապատճառին, և դա ինչպես է համընկնում մեզ հետաքրքրող անձի պատասխանին ու հակազդեցությանը: Որքան մեծ լինի նույնանման հակազդեցություն ու պատասխան ցուցաբերող անձանց թիվը, այդքան մեծ է կոնսենսուսը: 2- Կայունություն և անփոփոխություն. մեզ հետաքրքրող անձը տարբեր պայմաններում ու ժամանակներում արդյոք մշտապես նույն կերպով է արձագանքում դրդապատճառին: 3- Տարբերակիչ կողմ. Մեզ հետաքրքրող անձը տարբեր դրդիչների ու դրդապատճառների դեպքում արդյոք ցուցաբերում է միևնույն պատասխանը:

Քելյի տեսության համաձայն, ուրիշների վարքը ներքին պատճառներին վերագրելը մեծ մասամբ այն ժամանակ է կատարվում, երբ կոնսենսուսն ու տարբերակումը ցածր մակարդակի վրա են, իսկ կայունությունը բարձր: Ընդհակառակը, ուրիշների վարքը արտաքին պատճառներին վերագրելը կատարվում է այն ժամանակ, երբ կոնսենսուսը, տարբերակումը և կայունությունը երեքն էլ բարձր մակարդակի վրա են: Երբ կոնսենսուսը ցածր է, բայց տարբերակիչ կողմերը և կայունությունը բարձր, սովորաբար ուրիշների վարքը վերագրում ենք թե ներքին և թե արտաքին գործոններին: Քելյի տեսության կանխադրույթները մեծ մասամբ հաստատվում են սոցիալական իրականության փաստերով ու իրակադարձություններով:

Քելյի տեսությունը կարևոր դիտարկումներ է պարունակում պատճառականության հարցի վերաբերյալ, այդուհանդերձ այն դեռ լրամշակման ու ընդլայնման կարիք է զգում:

Ռոթերի սոցիալական յուրացման տեսությունը հիմնականում վերաբերում է տարբեր իրավիճակներում անձի որոշումների կայացմանը: **Ռոթերն** իր սոցիալական յուրացման տեսության մեջ շեշտը դնում է անահատականության յուրահատկության և իրավիճակը որոշողների յուրահատկությունների վրա՝ այդ երկուսը համարելով յուրացման և սովորելու փորձի արդյունք: Ռոթերը **Լեվինի** պես, վարքը համարում է անձի և միջավարի փոխհարաբերության արդյունք:

Ռոթերի տեսության կարևոր կետերից մեկը կոնտրոլի տեղի կամ լոկուսի հարցն է: Ըստ նրա տեսության, կոնտրոլի սկզբնակետը կարող է երկու առանձին տեղ լինել՝ ներքին և արտաքին: Նշեցինք արդեն, որ իրադարձությունների դրդապատճառների բնկալման կամ ճանաչման հարցում կան անհատական տարբերություններ: Ռոթերի հետազոտությունները արձանագրեցին, որ մի խումբ մարդկանց համար վարքի խթանիչները վերաբերում են իրենց ներքին գործոններին, մինչդեռ մյուսների համոզմամբ, դրանք պայմանավորված են արտաքին գործոններով:

Այսպիսով, իրադարձությունների ու դեպքերի վերլուծության, մեկնաբանման և գնահատման համար մարդիկ կարող են ունենալ՝ ներքին կամ արտաքին վերահսկման կենտրոն (սկզբանկետ): Ներքին լոկուս կոնտրոլ ունեցող անձինք հավատացած են, որ վերահսկում են իրենց սեփական ճակատագիրը, իսկ խթանիչները սեփական անձի գործողություններին, վարքին և յուտահատկություններին են վերաբերում: Արտաքին լոկուս կոնտրոլ ունեցող անձիք այն կարծիքի են, որ իրենց խթանիչները կախված են կամ մարիշ մարդկանցից, կամ ճակատագրին, կամ բախտին: Այսպիսի մարդիկ կարծում են, որ իրենք անզոր են արտաքին գործոնների դեմ:

Հեշտությամբ կարելի է նկատել լոկուս կոնտրոլի հսկայական դերը մեր վարքի և ճակատագրի վրա: Արտաքին լոկուս կոնտրոլ ունեցող անձիք, սուսանձնակի ջանք ու եռանդ չեն ներդնում իրենց պայմանների բարելավման ուղղությամբ: Եվ դա սպասելի է, եթե նրանք ներկա և ապագա իրադարձությունների հանդեպ չեն պատկերացնում սեփական դերակատարությունն ու վերահսկման հնարավորությունը, բնականաբար անիմաստ են համարում որևէ ջանք գործադրելը: Ի տարբերություն այս խմբի, ներքին լոկուս կոնտրոլի մարդիկ այն կարծիքին են, որ ամբողջովին վերահսկողություն ունեն՝ իրենց պայմանները և ըստ այդմ կարգավորում իրենց վարքը:

Հետազոտությունները ապացուցում են, որ երկրորդ խմբի մարդիկ ավելի արդյունավետ են գործում, ավելի քիչ են ենթարկվում ուրիշների ազդեցությանը և մեծ տեղ են տալիս անհատական հմտությունների ընդլայնմանը, անձնական զարգացմանը: Բացի այդ, նրանք ավելի շատ են ընդունում իրենց արարքների սեփական պատասխանատվությունը, քան արտաքին լոկուս կոնտրոլի մարդիկ:

Լոկուս կոնտրոլի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կոնտրոլի և նրա սկբզնակետի հարցերը վաղեմի անցյալ ունեն մարդկության պատմության մեջ, սակայն դրանց գիտական ուսումնասիրությունը կարճ ճանապարհ է անցել: Առաջին անգամ այն արծարծվել է Ռոթերի կողմից 1954 թվականին: Կոնտրոլը սպառնալից բովանդակություն է պարու-

նակում: Մասնագետները կոնտրոլ ասելով նկատի ունեն ցանկալի հետևանքներ ստեղծելու կամ անցանկալի հետևանքները կասեցնելու նկատմամբ անձի սեփական համոզվածության չափն ու կշիռը: Հետազոտությունները մատնանշում են լոկուս կոնտրոլի ազդեցիկ դերը վարքի ձևավորման մեջ: Անձի «կոնտրոլի» կամ վերահսկման սկզբնակետը կարող է լինել ներքին կամ արտաքին: Ներքին կոնտրոլի մարդիկ ընդունում են սեփական արարքների պատասխանատվությունը, մինչդեռ արտաքին կոնտրոլի մարդիկ միշտ կարծում են, որ ուրիշների վերահսկողության են ենթարկվում: Հետազոտության արդյունքները վկայում են, որ ներքին կոնտրոլի մարդիկ, արտաքին կոնտրոլի մարդկանց համեմատությամբ առավել արդյունավետ են գործում և ընդունում են իրենց հաջողությունների ու պարտությունների սեփական պատասխանատվությունը:

Գրականություն

1.Էլիս, Ալբերտ, Քրաֆորդ, Թեդ, (2008), Բարեկամական փոխհարաբերությունների ստեղծում, թարգմանիչ Ֆարզանեհ Ահմադի, Թեհրան, Ռասա հրատարակչություն:

2. Խոդափանահի, Մոհամմադ Քարիմ, (2008), Խթանիչներ և հույզեր, Թեհրան, Սամթ հատարակչություն:

3. Խաթիր Փաշա, Քիումարս, (1998), Լոկուս կոնտրոլի ուսումնասիրությունն ու գնահատումն ըստ միջին դպրոցի աշակերտների սեռի:

4. Ռիվ, Ջոն Մարշալ, 2009, Դրդապատճառ և հույզ, թարգմանիչ Յահիա Սեյդ Մոհամմադի, Թեհրան, Վիրայեշ հրատարակչություն (բնագրով հրապարակվել է 2005 թ.):

5. Քարիմի, Յուսեֆ, 1995, Անձի հոգեբանություն, Թեհրան, Վիրայեշ հրատարակչություն:

6. Քարիմի, Յուսեֆ, 2008, Սոցիալական հոգեբանություն, Թեհրան, Արասբարան հրատարակչություն:

7. Քուփայի, Շիրզադ Հաջի, 1995, Լոկուս կոնտրոլի հարաբերակցությունը տնօրենների արժանապատվության զգացումի և ուսուցիչների աշխատանքային բավարարվածության գործոնների հետ:

8. Քերու, Մայքել, Ռիդլի, Չին, 2005, Ամուսնական զույգերի հետ համաժամանակյա հոգեբանական աշխատանք համակարգային-վարքային մոտեցմամբ, թարգմանիչ Աշրաֆ ալ Սադաթ Մուսավի, Թեհրան, Քավիան հրատարակչություն, (գիրքը բնագրով հարատարակվել է 2000 թ.):

9. Գլասեր, Վիլիամ, Գլասեր, Քարլին, 2005, Ամուսնություն առանց պարտության, թարգմանիչներ Սոմաիա Խոշ-նիաթ և Հոդա Բարազանդեհ, Թեհրան, Մոհաղեղ հրատարակչություն, (Գիրքը բնագրով տպագրվել է 1995 թ.):

10. Rotter, J. (1966). Generalized expectancies for internal versus external control of reinforcements. Psychological Monographs, 80, whole No. 609 Wikipedia. Locus of control.

11. Gershaw, D.A. (1989).Line on life (Electronic version).Retrieved December 5,2004. From (http://www3.ac-reims.Edu/psy/degershaw/lol/ControlLocus.Html).

12.Levenson,H.(1973).Multidimensional locus of control in psychiatric patients. Journal of Consultinf and Clinical Psychlogy, 41,397-404.

13.Weiner,B.(1974).Achievement motivation and attribution theory Morristown.N.J.Genral Learning Press.

14.Weiner,B.(1980). Human Motivation. NY:Holt, Rinehart & Winston.

15.Lefcourt,H. M.(1966) Internal versus exernal external control of reinforcement: A review, psychological Bulletin, 65, 206-20.

16.Lefcourt, H.M.(1966).Locus of Control: Current Trends in Theory and Research New Jersey: Lawrence Erlbaum Associates. ISBN 0-470-154044-0

17.Rotter, J.B (1954). Social learning and clinical psychology. New York: prentice-Hall.

18. Rotter, J.B.(1990) Internal versus external control of reinforcement: Acase history of a Variable. American psychologist, 45,489-493.

19. Schultz , D.P.& Schultz, S.E.(2005). Theories of personality (Eight Edition). Wadsworth: Thomson. I.S.B.N.: 0-534-62403-2

The Locus of Control and Basis of Behavior

In this study the locus of control has been used as a framework for recognizing the basic causes of behavior. The major concern of this study is to find out "who and what" controls the behavior in individuals. Results show that locus of control in individual can be internal or external. Those with internal locus of control believe in their ability to control their own behavior, but those with external locus of control believe that others affect their behavior. Those with internal locus of control have a better control over their behavior than those with external locus of control. They also have more effective function and claim responsibility for their success and failure than those with external locus of control. Thus, thought, emotion and behavior are under the control of individuals, and by their recognition and learning certain skills they can obtain to internal control ability.